Զինչ հնացե(ա)լ հանդերձ լինի.
Անպիտացեալ ւ եղեր խոպան,
Նորըզնորըն զարդարէ.
Ի յառաջին կերպն ի նման:

Հոգին ածէ ձայն մարմնոյն.
Թէ մի ննջեր եհաս հրաման,
Կրկին առնէ ծանօթութիւն).
Հանց ճանաչէ զինչ ազգական:

Տաղաւար լինի հոգին.
Հող մարմնոյն ք(ա)ն զապարան,
Հ(ա)նդ(ե)րձի պէս ըզգեցուսցէ
Վ(ե)ր(այ) քաշէ իբր ըզվրան:

Ոչ ճանաչի արու եւ էգ.
Մ(ա)րդ կատարին երեսնամեան,
Գոյացուն առնու հոգին.
Հող մարմընովըն միանան:

Զինչ որ ունին անցանք ի հողն.
Ծածուկ գործոցն թագստեան,
Դժարակիր բեռունք լինին.
Ամէն զիւր տեղն ճանաչն տան:

Զերանաւէտ ձայնն որ լսեն.
Արժանաւորք ւ յետ անարժան,
Տանի իմեծ հրապարակին.
Անդրէն ուր տան զպատասխան:

Կարկամի ամէն լեղու.
Ճարտարախօսքն յիմարանան,
Ցամօթոյ զէտ մոմ հալին.
Տարէկուսին եւ համրանան:

Ով է տէսեալ այնցեղ պ(ա)ր(ո)ն.
Կամ փառիշահ ու մեծ տիւան,
Որ գալարին երկինք ւ երկիր.
Քան զմագաղաթի ի ծալլման:(*)

(–)ԺԶ. դարու վերջերը ապրող տաղասաց սարկաւագ Թոխաթցի իր «Տաղ Հոգւոյ Վերայ Ասացեալ»ի մէջ ունի խիստ նման տող մը «կու գալարին երկինք որպէս մագաղաթ»:(Տես իմ ուսումնասիրութիւնս ՀԱՅԵՆԻՔ Ամսագիր ,1935 թիւ 11, էջ 77ա.:)